

աննախապաշար վայելքը՝ ուր *Տրտունջքին* Վարուժանը դեռ չի հեծեր.

*Լուսինն ինծի չը հասած դուրսն որմիս տակ կը մեռնի,  
Եւ կը կոտորի փեղկերուն մէջ սիւքին թենն անուշակ:*

Ջուտ զգայական հաճոյքներ, ինչպէս *Արեւելեան բաղանիքը*, ուր բանաստեղծը, միջօրէի սիրահար, կեանքի սաստկութիւնն սը միայն ունի դեռ, լոյսի անխօս տրոփումներ, առանց խորհրդածական առանցքի սը: Յետոյ է որ պիտի փոթին *Գողգոթայի ծաղիկները*, ինչպէս կը կոչէ Վարուժան իր գրքին վերջին մասը, յետոյ է որ պիտի գան բոլոր տանջուած հոգիները, բոլոր մեծ կնճիռներն ու խորհրդածութեան ակօսները, ինչպէս բուխերիկին հեշտալիք ջերմութենէն վեր՝ ծուխն է որ կը ծառանայ, ինչպէս միջօրէն վերջ մեծ իրիկունը:

Իր գրքին վերջին մասին մէջ Վարուժան փոխն ի փոխ գողտր կ'երեւայ, միսթիք, հեգնող, ըմբոստ, վրէժխնդիր, հայրենաբաղձ, կրօնական եւ ընկերվարական: Այս երեւոյթապէս իրերամարտ հանգամանքները զիրար չն'ն չեզոքացներ գրքին մէջ, ընդհակառակը զիրար կը լրացնեն, եւ ամէնքն ալ Վարուժանինն են իբրեւ իր ամէնէն մտերիմ մասնիկները, տրուած ըլլալով իր կեանքին յատուկ առարկաները, ու այն պայմանները, որոնց մէջ ապրած է ան:

Բոլոր իր գանազան հանգամանքներու արտայայտութեանց մէջ, Վարուժան կը պահէ իր միջօրէի ուժգին պայծառութիւնը, եւ իր միսթիք երեցող տողերն անգամ, ուր կրօնական նօսք քաղցրութիւններ կը ջրվէժին՝ հիւանդագին խորհրդապաշտի յատուկ չնն, այլ իրականութեանց սաստկութենէն յառաջ եկած խտրումներ, ընդարձակ միջօրէին մէջ ծաւալող շոգիներու սատափէ ծուէնի սը պէս, կեանքին ծանրութենէն կարծես քրտնաթոր:

Անուրանալի է անշուշտ արդի եւրոպական գրականութեան, մասնաւորապէս պելճիքական գրականութեան երկու գլխաւոր հզօր դէմքերուն՝ Վէռհառնի եւ Մէթէլլինկի ազդեցութիւնը իր քերթուածներուն արուեստին վրայ: Իր